մէջ եղբայրասէրի մօր՝ Բերինիկէի անունով կոչուած էր:

Ժէ. դարուն սկիզբն ալ, երբ տակաւին Սբ. Էջի լրանցքը գոյութիւն չունէր և այս ճամբան բանուկ էր մասամբ, ըստ Ագոնցի «աւան աննշան» եղած էր այս նաւահանգիստը, որ երբեմն այնքան նշանաւոր էր և իր ներքնաշխարհն ունէր, յիչեալ 10 քաղաքներով, որոնց հետքը իսկ չէ մնացած այսօր. ինչպէս Ագոնց կ'ըսէ, հիմա միայն «գտանին ուրեք ուրեք արաբացիք, որք թափառեալ յածին ընդ այն անապատս» (Ափրիկէ, էջ 84):

Պատերքը (էջ 368) կ'ըսէ, թէ Պաղոմէոսեան չրջանին անապատի ճամբան հոս «Սպիտակ նաւահանգիստ»ի մօտ (Leukos Limen) կը վերջանար: Սէբէլի հին ժամանակներու մէջ, կը յանգէր Ouâdi Gasoûsի մօտ, Քասէյրէն քիչ մը հիւսիս Saon կոչուած տեղ մը: 6էն 7 քիլոմէթր Քասէյրէն դէպի հիւսիս կը գտնուի հին Քասէյրը, չատ քիչ հնութիւններով:

Մեր հայ եպիսկոպոսը, որ 8 օրուան մէջ ճեղքած էր արեւելեան անապատը, — իր ատենն ալ արդէն անչքացած — այդ նաւահանգիստէն նաև կ'առնէ և 30 օրուան նաւարկութենէ մը յետոյ կարմիր ծովու վրայ, կը հասնի Ասվաֆի կամ Սուվաֆին (տող 12 և 19-20), զոր կը համարէ սահմանագլուխ:

Այսօր կը գտնուի Սուեզի կարմիր ծովու միւտիրիէթին մէջ: Բնակչութիւնն է 10.000 հոգի: Արտաքին վաճառականութիւնը բանուկ է և երկաթուղիի գիծերու մեկնակէտն է: Հոն կը յանգի Սէնարէն եկող երկաթուղին: կապուած է նաև Պարպար քաղաքին՝ երկաթուղագիծով մը:

Ագոնց (Ափրիկէ, էջ 517) կը գրէ, թէ Նուպիոյ այս մասը նուաճուած էր Օսմանցիներէն երկու դար առաջ, այսինքն 1600-ական թուականներուն,